ԱՆԱՀԻՏ ԱՆՏՈՆՅԱՆ

Ո՞Վ Է ՍՈՒՐԲ ՈՍԿՅԱՆՑ ԵՒ ՍՈՒՐԲ ՍՈՒՔԻԱՍՅԱՆՑ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԻՇՎԱԾ ՀԱՅՈՑ ԱՐՏԱՇԵՍ ԹԱԳԱՎՈՐԸ, ԵՒ ՈՎՔԵ՞Ր՝ ՆՐԱ ՈՐԴԻՆԵՐԸ

Սկիզբը՝ 2021 թ. Թ. համարում

ՈՐՈՇ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մովսես Խորենացու (եւ հիմնականում այլ հայ պատմիչների) ժամանակագրությամբ Տիրան թագավորն իշխել է 130–150 թթ., նրան հաջորդած Տիգրանը (Սոհեմոս)՝ 150–191 թթ.՝ ընդմիջումով պարթեւահռոմեական պատերազմի ժամանակ[1]։

Նայելով գահատարիներին՝ հարց է առաջանում, թե ինչ հանգամանքներում է շուրջ 10-ամյակ գահակալած Տիրանը թագ ստացել Անտոնինոս կայսրից, ինչպես պատմում է Սուքիասյանց վկայաբանությունը։ Միքայել Չամչյանը կարծում է, որ Տիրան թագավորը 138 թ. անհրաժեշտություն է ունեցել վերանորոգելու դաշինքը Հռոմի հետ, որտեղ գահ էր բարձրացել նոր կայսրը՝ Անտոնինոս Պիոսը (138–161 թթ.)[2]։ Խոսքը Տիրանի հայր Արտաշեսի եւ Տրայանոս կայսեր (98–117 թթ.) միջեւ հաստատված դաշինքի մասին է, որին կանդրադառնանք իր տեղում։ Նոր գահակալած Անտոնինոս կայսրին Տիրանը հավաստիացրել է Հռոմին Հայաստանի հավատարմության հարցում, ինչն առիթ է դարձել, որ պար-

---

[1] *Մ. Չամչյանի վերականգնումով՝ Տիրանն իշխել է 131–152 թթ., Տիգրանը՝ 152–193 թթ. (տե՛ս* Մ. ՎՐԴ. ՉԱՄՉԵԱՆ, *Հայոց պատմութիւն, հտ. Ա., Վենետիկ, 1784, էջ 353–357, հտ. Գ., Վենետիկ, 1786, «Ժամանակագրութիւն», էջ 43–44)։ Լ. Շահինյանի վերականգնումով՝ Տիրանն իշխել է 128–149 թթ., Տիգրանը՝ 149–191 թթ. (տե՛ս «Մովսես Խորենացի. պատմություն եւ ժամանակագրություն», Երեւան, 1988, էջ 201. նույն հեղինակի՝ «Հայաստանը եւ առաջին Արշակունիները», Երեւան, 1993, էջ 195 եւ 406, 409 էջերի աղյուսակները)։*

[2] *Տե՛ս* Մ. ՎՐԴ. ՉԱՄՉԵԱՆ, *Հայոց պատմութիւն, հտ. Ա., էջ 353–354։*

թեական Պերոզ թագավորն արշավի Հայաստան։ Սուքիասյանց վկայաբանության տեղեկությունն այն մասին, որ ճգնակյաց սրբերն աղոթում էին նեղության մեջ հայտնված ժողովրդի համար, թույլ է տալիս մտածել, որ պարթեւ թագավորը նախնական հաջողություններ է ունեցել եւ մեծ վտանգ ներկայացրել Հայաստանի համար։ Այդպիսի իրավիճակում արշավանքի դադարեցումը կայսեր նամակով եւ սպառնալիքով, ինչպես եւ մինչ այդ հայոց գահին Տիրանի իշխանության ճանաչումն ու նրան թագ եւ ծիրանի ուղարկելը՝ Հռոմի կողմից ներկայացվել են իբրեւ թագավորի շնորհում Հայաստանին եւ արտահայտվել Հռոմի նոր գահակալի 140—143 թթ. դրամներում։

Սուքիասյանց սրբերը, այսպիսով, ողջ էին Տիրան թագավորի ժամանակ՝ 140 թ. պարթեւական արշավանքի ընթացքում։ Արշավանքի հեղինակ պարթեւական թագավոր Վաղարշ Բ.-ին է (105—147 թթ.) վկայաբանությունը Պերոզ կոչում, ինչպես եւ ընդհանրապես հայ մատենագրությունը՝ բացատրելով, որ Պերոզ նշանակում է հաղթող։ Նույն իմաստն ունեցել է պահլավերենում, պարսկերենում, հավասարազոր է հունարեն Նիկատոր, լատիներեն Վիկտոր[3] անուններին, որոնք կիրառվել են ինչպես իբրեւ պատվանուն, այնպես եւ՝ անձնանուն։

Պերոզ թագավորի գահատարիներով Մովսես Խորենացին մատնանշում է Արտաշես թագավորի որդիներ Տիրանի եւ Տիգրանի գահ բարձրանալու տարեթվերը։ Երկրորդ գրքի ԿԲ. եւ ԿԴ. գլուխներում պատմիչն ասում է, որ Տիրանը գահակալեց պարսից առաջին Պերոզի իշխանության 3-րդ, իսկ Տիգրանը՝ 24-րդ տարում[4]։ Վաղարշ Բ. Պերոզի 1-ին տարին Մովսես Խորենացին (եւ հայ պատմիչները) ճանաչում են 128 թ. եւ ոչ 105 թ., ինչպես ընդունված է՝ համաձայն այս թագավորի դրամների։ Այս հարցում եւս Սուքիասյանց վկայաբանությունը հստակություն է բերում։

Այսպես՝ Սուքիասյանց վկայաբանությունը հաղորդում է, որ երբ մահացավ հայոց Արտաշես թագավորը, մահացավ նաեւ պարսից թագավորը՝ «պարսից Արտաշեսը», եւ գահակալեց Պերոզը, այսինքն՝ Վաղարշ Բ.-ն։ Վերջինս, ըստ դրամների, միաժամանակ իշխել է սկզբում Բակուր Բ.-ի

---

[3] *Տե՛ս Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ., Երեւան, 1948, էջ 262։*

[4] *Տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, գք. Բ., գլ. ԿԲ. եւ ԿԴ., Տփղիս, 1913, էջ 193 եւ 196, աշխ.՝ Երեւան, 1990, էջ 125 եւ 127։ Մովսես Խորենացու բնագրում 24-րդի փոխարեն 4-րդ է, որը ուսումնասիրողները, ընդօրինակման սխալ համարելով, ուղղում են 24-րդ, քանի որ նախորդած Տիրանը, գահակալելով նույն թագավորի 3-րդ տարում, իշխել է 21 տարի։*

(78—116 կամ 105 թթ.), Արտավան Դ.-ի (80—88 կամ 90 թթ.), 109 թվականից՝ նաեւ Խոսրով Ա.-ի (109—128/129 թթ.) հետ։ Երկար ժամանակ վիճարկելով իշխանությունը գահակիցների հետ եւ իշխելով միայն երկրի մի մասի վրա՝ Վաղարշ Բ. Պերոզը Խոսրով Ա.-ի մահից հետո՝ 128/129 թթ., իշխել է պաշտոնապես՝ մինչեւ մահը գահակից լինելով Միհրդատ Դ.-ին (128/129—147 թթ.)[5]։ Նշանակում է՝ հայոց Արտաշեսի հետ միաժամանակ մահացած «պարսից Արտաշեսը» Խոսրով Ա.-ն է, եւ նրանք, ըստ Խոսրով Ա.-ի դրամների, մահացել են 128 կամ 129 թ.։

Հայոց Արտաշես թագավորի մահվան նույն թվականն է ցույց տալիս Մովսես Խորենացին, այն է՝ Արտաշես թագավորը գահակալել է Աբգարի 38, Սանատրուկի 30, Երվանդի 20 տարի գահակալություններից հետո, իսկ Աբգարի իշխանության 2-րդ տարում Օգոստոս կայսեր մարդահամարն էր, երբ ծնվեց մեր Տեր Հիսուս Քրիստոս։ Ուրեմն՝ հայոց Արտաշեսը գահ է բարձրացել 87 թ. եւ իշխելով 41 տարի՝ մահացել 128 թ.[6]։ Փաստորեն հայկական աղբյուրները ցույց են տալիս Վաղարշ Բ. Պերոզի ոչ թե ինքնահռչակ իշխանության եւ գահակալական պայքարի տարիները, այլ պաշտոնական գահակալության տարին՝ 128 կամ 129 թվականը։ Մինչ այդ նա կարող էր օրինական գահակալ չդիտվել։ Հակառակ այն իրողության, որ նա դրամ է հատել մինչ 128 թ., պարսից մատյաններում, որոնցից օգտվել է Մովսես Խորենացին[7], ինչպես եւ իր ժամանակին Հայաստանում, երբ գրվել է վկայաբանությունը, Վաղարշ Բ.-ի իշխանության առաջին տարին ճանաչվել է նրա պաշտոնական գահակալության 128/129 թ.։ Մի իրողություն նույնպես կարող է հավաստել, որ Վաղարշ Բ. Պերոզը մինչ 128 թ. պաշտոնապես չի գահակալել։ Այս թագավորը, որը բնութագրվում է Հռոմի նկատմամբ անհաշտ վերաբերմունքով, Պարթեւական տերության դեմ Տրայանոս կայսեր (98—117 թթ.) արշավանքի ժամանակ զարմանալիորեն հիշված չէ։ Եթե նա անգամ 105 թվականից

---

[5] *Պարթեւական թագավոր Վաղարշ Բ.-ն դիտված է նաեւ որպես Վաղարշ Գ., վերջինս՝ Վաղարշ Դ. (տե՛ս* Յ. ՎՐԴ. ՏԱՇԵԱՆ, *Արշակունի դրամներ, Վիեննա, 1917, էջ 116—140.* Н. Дибвойз, Политическая история Парфии, СПб, 2008, *էջ 193—194, 204—205.* Parthia.com *կայքում՝* http://www.parthia.com/parthia_rulers.htm *եւ* http://www.parthia.com/parthia_chrono.htm)*։*

[6] *Տե՛ս* Լ. ՇԱՀԻՆՅԱՆ, *Մովսես Խորենացի. պատմություն եւ ժամանակագրություն, էջ 201. նույն հեղինակի՝ «Հայաստանը եւ առաջին Արշակունիները», էջ 406։ Արտաշեսի գահակալությունը 1 տարի տարբերությամբ՝ 88—129 թթ. է տեղադրում Մ. Չամչյանը (տե՛ս «Հայոց պատմութիւն», հտ. Ա., էջ 339—351 եւ հտ. Գ., «Ժամանակագրութիւն», էջ 42—43)։*

[7] *Տե՛ս* ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, *Պատմութիւն Հայոց, գք. Բ., գլ. ԽԸ., 1913, էջ 176, աշխ.՝ 1990, էջ 112։*

է գահին (ինչպես որոշ դեպքերում է ճանաչվում՝ նախորդ տարիների դրամներն այլոց հատկացնելով), 115—117 թթ. նա մեկ տասնամյակ արդեն գահակալում է, սակայն թագավորության ո՞ր մասում, եթե հռոմեական զորքերը հասել են մինչեւ Բաբելոն, Սելեւկիա եւ մայրաքաղաք Կտեսիփոն (Տիզբոն), իսկ նրա մասին հիշատակություն չկա, նա հռոմեացիներին դիմադրողների շարքում չէ։ Իբրեւ ընդդիմացողներ՝ հիշատակված են Խոսրով Ա.-ն, Միհրդատը (ենթադրվում է՝ Խոսրով Ա.-ի եղբայրը), նրանց որդիները։ Հայկական աղբյուրները, այսպիսով, ճիշտ են ցույց տալիս, որ նա պաշտոնապես գահակալել է Խոսրով Ա.-ի մահից հետո։

Նկատի առնենք նաեւ, որ եթե պարսից Խոսրով Ա.-ի մահվան տարին մեկ կամ երկու տարի տարբեր լիներ 128/129 թվականից, որն այսօր ընդունված տարեթիվն է, կամ Մովսես Խորենացու ժամանակագրությունն ինչ-ինչ պատճառով մեկ-երկու տարի տարբեր հաշվարկվի, որեւէ բան չի փոխվում. հասկանալի է, որ Սուքիասյանց վկայաբանության նշումը, թե հայոց Արտաշեսի հետ միաժամանակ մահացավ պարսից թագավորը, եւ գահակալեց Պերոզը, ենթադրել է տալիս նույն կամ մոտակա տարին։ Սակայն փաստն այն է, որ դրանք համընկնում են։ Մովսես Խորենացու ժամանակագրությամբ ոչ միայն Խոսրով Ա.-ի (ըստ պատմահոր եւ Սուքիասյանց վկայաբանության՝ պարսից Արտաշեսի) մահվան, այլեւ գահակալության սկիզբն է համընկնում այսօր պատմագիտության ընդունած տարեթվին (109 թ.)։ Համաձայն Մովսես Խորենացու՝ պարսից Արշավիր թագավորի 20-րդ տարում գահ է բարձրացել հայոց Աբգար թագավորը, իսկ Աբգարի 2-րդ տարին 1 թ. է։ Ուրեմն՝ 1 թվականը պարսից Արշավիրի 21-րդ տարին է։ Նա կառավարել է 46 տարի, ուրեմն՝ ներառյալ մինչեւ Ք. հ. 26 թվականը։ Հաջորդ չորս արքաներն են Արտաշեսը՝ 34, Դարեհը՝ 30, Արշակը՝ 19, Արտաշեսը՝ 20 տարի գահակալմամբ։ Վերջինիս, այսինքն՝ Արտաշես-Խոսրով Ա.-ի 1-ին տարին կլինի 26, 34, 30, 19 տարիների գումարը՝ 109 թ., եւ մահը՝ 20 տարի անց՝ 128 կամ 129 թ.։

Այս համապատասխանությունը շատ արժեքավոր է։ Հայտնի է, որ պարթեւական թագավորների վերաբերյալ Մովսես Խորենացու մատուցած անվանացանկն ու գահատարիները զգալի տարբերություն ունեն գրավոր այլ աղբյուրներով, բայց հիմնականում պարթեւական դրամներով վերականգնվող պատկերի հետ։ Որպես պատճառ, հավանաբար, պետք է դիտել նաեւ պարագաները, թե ո՛ւմ են ընդունել օրինական գահակալ, կենսագրության ո՞ր պահից են ճանաչել գահակալումը եւ ի՞նչ

անունով են ճանաչել տվյալ թագավորին։ Վաղարշ Բ. Պերոզը, օրինակ, ըստ Մովսես Խորենացու, մահացել է 161/162 թթ. եւ ոչ 147-ին, ինչպես ճանաչվում է ըստ նրա եւ որդու դրամների։ Բայց չէ՞ որ չի բացառվում, որ որդին՝ Վաղարշ Գ.-ն, կարող էր գահակից լինել հորը, եւ ինքը նույնպես դրամ հատել հոր գահակալության օրոք՝ առավել եւս նրա ծերության շրջանում՝ իբրեւ փաստական կառավարող։

Իրապես, չի կարելի խոսուն չհամարել, որ Մովսես Խորենացու ներկայացրած Եւ հայոց, Եւ պարթեւ թագավորների շարքով հաշվելով՝ հայոց թագավոր Արտաշեսը եւ պարսից թագավոր Խոսրով Ա.-ն (պարսից Արտաշեսը՝ ըստ Սուքիասյանց վկայաբանության եւ հայ մատենագրության) միաժամանակ են մահացել, ինչպես առանց որեւէ տարեթիվ կամ ժամանակագրություն ներկայացնելու հայտնում է վկայաբանությունը՝ լինելով ավելի վաղ գրված եւ անկախ հայ պատմիչներից։

Վերեւում ասացինք, որ Անտոնինոս Պիոս կայսեր կողմից Տիրանին թագ ուղարկելու եւ Վաղարշ Բ. Պերոզի՝ դեպի Հայաստան ձեռնարկած արշավանքի մասին հայ պատմիչները չեն հիշատակում։ Միայն Սամուել Անեցին (ԺԲ. դար) իր ժամանակագության մեջ 148 թ. ներքո ունի նշում՝ Վաղարշ, որ Պերոզ կոչվեց Հռոմի վրա հարձակվելու համար։ Նույն բացատրությամբ (Պերոզ կոչվեց Հռոմի վրա հարձակվելու համար) 164 թ. ներքո նշված է նաեւ Վաղարշ Գ.-ն[8]։ Երկրորդ դեպքում նկատի է առնված 161—166 թթ. պարթեւահռոմեական պատերազմը, իսկ 148 թ. ներքո, կարծում ենք, որ Սամուել Անեցու կողմից նշված է Սուքիասյանց վկայաբանության հիշած արշավանքը։ Արշավանքների տարեթվերը պատմիչը մի քանի տարի հետո է ցույց տալիս։ Պետք է նկատի ունենալ, սակայն, որ տարեթվերը պատմիչի վերականգնածն են։ Հայտնի է, որ Սամուել Անեցին առաջինն է հայ պատմիչներից, որ աղբյուրներում եղած ժամանակագրական հաղորդումները՝ սկսած Քրիստոսի Սուրբ Ծննդյան 1 թ., վերածել է տարեթվերի։ Եւ եթե հաշվի առնենք, որ Անտոնինոս Պիոս կայսեր մահից հետո՝ 161 թ., Վաղարշ Գ.-ի արշավանքը դեպի Հռոմ պատմիչը ճանաչում է 164 թ., այսինքն, ըստ իր հաշվարկի, իրականից 3 տարի հետո, նույն սկզբունքով 148 թ. ներքո նշած արշավանքը կարող ենք հասկանալ ավելի վաղ տեղի ունեցած՝ ներդաշնակ Անտոնինոս Պիոս կայսեր դրամներին։

---

[8] *Տե՛ս* Սամուել Անեցի, *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 57—58։*

Հավանական ենք համարում նաեւ, որ Վաղարշ Բ. Պերոզի արշավանքի համար 148 թվականը Սամուել Անեցին ոչ թե հաշվարկել, այլ ուղղակի վերցրել է Սուրբ Սուքիասյանց վկայաբանությունից։ Հնարավոր է, որ սրբերի նահատակության թվականը վկայաբանության իր ունեցած օրինակում նա նշված է տեսել ոչ թե 130 կամ 140, որը (մահվան 2 տարեթիվ), ինչպես վերեւում նշեցինք, կարող էր ծագել ընդօրինակողի ունեցած ձեռագրում գրի անհստակությունից, այլ՝ 148 թ., եւ մտածել է, որ եթե նրանք նահատակվել են Վաղարշ Բ. Պերոզի արշավանքից հետո, որի ժամանակ աղոթում էին, ուրեմն արշավանքն էլ այդ տարում է եղել։ Բայց վկայաբանությունը չի որոշակիացնում, թե արշավանքից որքան ժամանակ հետո են սրբերը նահատակվել. դա կարող էր տեղի ունենալ նաեւ մի քանի տարի անց։ Վկայաբանությունն էլ արշավանքի դադարեցման մասին պատմելուց հետո հիշատակում է, որ սրբերը, իրենց ճգնության լեռից իջնելով, քարոզում էին ժողովրդին[9]։ Այսինքն՝ արշավանքը եղել է նրանց նահատակության 148 թվականից տարիներ առաջ՝ 140–143 թթ. միջակայքում։

Վկայաբանության միջոցով բացատրություն ունենք նաեւ, թե ինչու է Սամուել Անեցու գործում Վաղարշ Բ.-ի դեպի Հայաստան արշավանքը նշված որպես Հռոմի դեմ ձեռնարկված։ Տիրան թագավորի եւ Անտոնինոս Պիոս կայսեր միջեւ դաշինքի նորոգությունը, կայսեր կողմից Տիրանին թագի շնորհումն առիթ են տվել, որ դեպի Հայաստան արշավանքը հավասարազոր ընկալվի Հռոմի դեմ պատերազմելուն։

Սամուել Անեցին վկայաբանության համաձայն է նաեւ Վաղարշ Բ.-ի վերադիր Պերոզ անունը կապում 140-ականների արշավանքի հետ, երբ դեռ ողջ էին Սուրբ Սուքիասյանք։ Եւ դա հակառակ անգամ Մովսես Խորենացու, որը Վաղարշ Բ.-ին Պերոզ անունը տրված է համարում 161–166 թթ. պատերազմն սկսելու առիթով, քանի որ ըստ պատմիչի՝ նախնական հաջողությունից հետո նա մահացել է այդ պատերազմի սկզբում[10]։ Սամուել Անեցին նույնպես Վաղարշ Բ.-ի մահը հաշվարկել է 162 թ., այսինքն՝ իրականում այդ պատերազմի սկզբում, բայց պատերազմն սկսված է համարել 164 թվականին, քանի որ Անտոնինոս Պիոսի մահվան

---

[9] *Տե՛ս* Մ. ՎՐԴ. ԱԻԳԵՐԵԱՆ, *Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, հտ. Բ., Վենետիկ, 1811, էջ 96–97։*

[10] *Տե՛ս* ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, *Պատմութիւն Հայոց, գք. Բ., գլ. ԿԴ., 1913, էջ 197, աշխ.՝ 1990, էջ 127–128։ Սուրբ Սուքիասյանց վկայաբանության մեջ Վաղարշ Բ.-ի Պերոզ անունը ներմուծվել է հետագայում՝ տարբերակելու համար միմյանց հաջորդած պարթեւական նույնանուն թագավորներին։*

տարին հաշվարկել է 163 թ.։ Այս կերպ, այսինքն՝ Վաղարշ Բ.-ի մահը հաշվարկելով 162 թ., իսկ Հռոմի դեմ արշավանքի սկիզբը դնելով 164 թ.՝ նա Պերոզ անունը վերագրել է նաեւ Վաղարշ Գ.-ին։

Այս դիտարկումներով կարող ենք վստահանալ, որ 140-ականների սկզբին՝ Արտաշեսի որդի Տիրանի օրոք, Սուքիասյանք ողջ էին, երբ Վաղարշ Բ.-ն արշավեց դեպի Հայաստան, եւ նահատակվել են 148 թ., եթե իսկապես Սամուել Անեցին այս թվականն է գրանցված տեսել նրանց վկայաբանության մեջ, եւ կամ՝ 150 թ., եթե նրանց ճգնության 44 տարին անխախտ նկատենք եւ հաշվարկենք Ոսկյանց նահատակության 107 թվականից, երբ գահին էր Արտաշեսը։

Այսպիսով՝ Սուրբ Ոսկյանց եւ Սուքիասյանց վկայաբանությունները այլ աղբյուրների հետ ներդաշնակորեն ցույց են տալիս Հայաստանում Ք. հ. Ա.—Բ. դդ. սահմանագծում Արտաշեսի եւ Բ. դ. նրա որդիների՝ Տիրանի եւ Տիգրանի գահակալությունը։

ԱՐՏԱՇԵՍԻ ՄԱՍԻՆ

Արդի պաշտոնական պատմագիտությունը (նկատի ունենք՝ դպրոցներում եւ բուհերում դասավանդվող) այդ ժամանակահատվածում՝ Ա. դարավերջ — Բ. դարասկիզբ, չի ճանաչում Արտաշես թագավորի, քանի որ, ինչպես նշել ենք հոդվածի սկզբում, սկզբնաղբյուրներից հայտնի հայոց այս արքային, կարելի է ասել, իր ողջ կենսագրությամբ՝ ընտանիքով, գործունեությամբ, տեղափոխում է մոտ 280 տարի առաջ՝ միավորելով Ք. ա. 189—160 թթ. գահակալած Արտաշես Ա.-ի հետ։ Ակնհայտ է, սակայն, որ Սաթենիկի հետ Հայաստան եկած եւ այստեղ քրիստոնեություն ընդունած ու նահատակված սրբերը Քրիստոսից առաջ ապրած լինել չէին կարող, նաեւ՝ հռոմեական ու պարթեւական գահակալների հետ սկզբնաղբյուրներով ավանդված առնչությունները հնարավոր չեն դարձնում նման տեղափոխումը եւ մեր դիտարկած Արտաշես թագավորի նույնացումը միայն հունահռոմեական պատմիչներից հայտնի Արտաշես Ա.-ի հետ։

Այս տեղափոխման հիմնական պատճառն այն է, որ ԺԹ. դարասկզբից, երբ նոր էին վեր հանվում եւ համադրվում հայոց պատմությանը վերաբերող օտար աղբյուրների, հնագիտության, դրամագիտության եւ այլ տեղեկությունները, անհամատեղման, անհարթությունների դեպքում կասկածի տակ են դրվել հատկապես հայկական սկզբնաղբյուր-

ների տեղեկությունները։ Պատմությամբ բոլոր հետաքրքրվողների հետ երախտապարտ լինելով այն մեծ գիտնականներին, որոնք ասպարեզ են բերել, թարգմանել եւ ներկայացրել են պատմական նյութերը՝ հնարավորություն ընձեռելով մտորել դրանց շուրջ, մեզ հետաքրքրող խնդրում, կարծում ենք, որ օտար աղբյուրների տեղեկությունները ոչ թե մերժում, այլ լրացնում են հայկական աղբյուրները։ Արդեն տեսանք, որ Արտաշես թագավորի եւ պարթեւական Խոսրով Ա. թագավորի համաժամանակյա մահվան մասին վկայաբանության տեղեկությունը համընկնում է պարթեւ թագավորների դրամների եւ Մովսես Խորենացու ժամանակագրական ցուցումների հետ, Պերոզ Վաղարշ Բ.-ի՝ դեպի Հայաստան ձեռնարկած եւ կայսեր պահանջով դադարեցրած արշավանքի մասին վկայաբանության տեղեկությունը հաստատվում է Կապիտոլինուսի հաղորդմամբ, իսկ Անտոնինոս Պիոս կայսեր դրամները հաստատում են Արտաշեսի որդի Տիրանին թագ եւ ծիրանի տալու մասին վկայաբանության տեղեկությունը։ Տեսանք, որ միմյանց չեն հակասում, ընդհակառակը՝ լրացնում են Տիգրանի՝ նույնն է Սոհեմոսի եւ նրա որդիներ Բակուրի եւ Վաղարշի մասին հայկական եւ հունահռոմեական հաղորդումները։

Արտաշես թագավորին՝ իր տիկնոջով, որդիներով եւ գործերով, Ա. — Բ. դդ. սահմանագծում շատ լավ գիտեն հայոց պատմիչները, գիտեն առավել, քան վաղ շրջանի հայոց ցանկացած արքայի մասին։ Նրա մասին առավել ընդարձակ պատմում է Մովսես Խորենացին «Հայոց պատմության» երկրորդ գրքի Լէ. գլխից մինչեւ Կ.՝ ամբողջ 24 գլուխներում, իսկ նրա գահակալած որդիների մասին՝ նույն գրքի ԿԱ. — ԿԴ. գլուխներում[11]։ Երկրորդ գրքի ԽՀ. գլխի վերջում պատմիչն ասում է, որ Արտաշես թագավորի, նրա նախորդի՝ Երվանդի մասին շարադրում է՝ սկզբնաղբյուր ունենալով մեհենական պատմությունների հեղինակ Ողյումպ քուրմին, պարսից մատյանները՝ նշելով, որ դրանց ձայնակից են նաեւ վիպասանների երգերը։ Ընդգծենք, որ վիպասանների երգերը, նաեւ Արտաշեսի ու Սաթենիկի հարսանիքին նվիրված երգ-զրույցը, ինչպես եւ նրանց որդի Արտավազդի մասին առասպելապատումը Մովսես Խորենացու համար զուտ գեղարվեստական համեմումներ են։ Մովսես Խորենացին դրանց այդպես էլ վերաբերվել է՝ որպես պատմական անցքերի շուրջ հյուսված

---

[11] *Տե՛ս* Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց, գք. Բ., գլ. Լէ.–Կ., ԿԱ.–ԿԴ., էջ 161—199, աշխ.՝ 1990, էջ 103—128։*

երգ-պատումների եւ առասպելաբանությունների[12], իսկ սկզբնաղբյուր որպես՝ նշում է Ողյումպ քուրմին եւ պարսից մատյանները։ Օգտագործած սկզբնաղբյուրները նշելու առումով Մովսես Խորենացին զարմանալիորեն ճշտապահ է, իսկ երեւույթն ընդհանրապես քիչ է հանդիպում։ Երկրորդ գրքի ԿԶ. գլխում պատմիչը պարզաբանում է, որ մեհենական պատմություններին, ուրեմն եւ Ողյումպ քուրմին, ծանոթ է Բարդածան Եդեսացու միջոցով, որը գալով Հայաստան եւ հետեւորդներ չգտնելով՝ հաստատվել է Անի ամրոցում (Դարանաղի գավառում), կարդացել մեհենական մատյանները, որոնց մեջ՝ հայոց թագավորների պատմությունները, եւ բոլորը թարգմանել ասորերեն, որը հետո թարգմանվել է հունարեն։ Մեհենական պատմություններին Բարդածանն ավելացրել է իր ժամանակի անցքերը[13]։ Բարդածանից օգտվելով՝ Մովսես Խորենացին պատմում է մինչեւ հայոց Վաղարշ Բ. թագավորի ժամանակը ներառյալ եւ նրա որդու՝ Խոսրովի գահակալության սկիզբը, այսինքն՝ մինչեւ Գ. դարասկիզբ։

Ասորական գրականության հիմնադիր համարվող Բարդածանը[14] (154–222 թթ.) ժամանակակիցն է Արտաշեսի գահակալած 3-րդ որդու՝ Տիգրան Սոհեմոսի եւ վերջինիս որդի Վաղարշ Բ.-ի, իսկ մինչ այդ նրա բերած փաստական նյութը մեհենական մատյաններից է։ Արտաշես թագավորի պարագայում գործ ունենք Մովսես Խորենացու օգտագործած այնպիսի սկզբնաղբյուրի հետ, որը կարելի է որակել որպես հայոց թագավորների գործերի Հայաստանում գրված արձանագրություն, որը պահվել է Դարանաղյաց Անիում, որտեղ հայոց թագավորների հանգստարանն էր[15]։ Մեհենական մատյաններից գրի առածն ասորերեն փոխադրելիս Բարդածանը, եթե ինչ-որ բան շփոթած էլ լինի, համենայն դեպս ոչ այնքան, որ շփոթեր իրեն ժամանակակից հայոց երկու թագավորներին ու նրանց հորն ու պապին, առավել եւս՝ երբ ինքը տեւական ժամանակ գտնվել է Հայաստանում[16]։

---

[12] *Տե՛ս անդ, գք. Բ., գլ. ԽԸ., Ծ., էջ 176, 178–179, աշխ.՝ 1990, էջ 112, 115–116։*

[13] *Տե՛ս անդ, գք. Բ., գլ. ԿԶ., էջ 201–202, աշխ.՝ 1990, էջ 130։*

[14] *Հիպոլիտոս Բոստրացին Բարդածանին ազգությամբ հայ է համարում, Հուլիանոս Աֆրիկանոսը՝ պարթեւ, Պորփյուրը՝ բաբելացի, Եւսեբիոս Կեսարացին, Եպիփանը եւ Հերոնիմոսը՝ միջագետքցի. տե՛ս Հ. Մելքոնյան, Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից, Երեւան, 1970, էջ 151։*

[15] *Տե՛ս Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, դպր. Դ., գլ. ԻԴ., Երեւան, 1987, էջ 222 (գրբ.), 223 (աշխրհբ.)։*

[16] *Բարդածանի մասին, որպես Մովսես Խորենացու ունեցած գրավոր աղբյուրի, տե՛ս Հ. Մելքոնյան, Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից, էջ 151–157։*

Արտաշես թագավորի մահվան ու թաղման դրվագները Մովսես Խորենացին նկարագրում է համաձայն Արիստոն Փեղղացու (Փելլա/Փեղղա՝ քաղաք Իսրայելում), որը գրել է Ադրիանոս կայսեր ժամանակ (117–138 թթ.) բռնկված Բարքոբայի (Բար-Կոխբա) ապստամբության (132–135 թթ.) մասին։ Աշխատությունը չի պահպանվել, բայց ինչպես Մովսես Խորենացին է փոխառել այդ երկից, Արիստոնն իբրեւ ականատես է նկարագրել Մարանդում[17] Արտաշեսի հիվանդանալու, մահվան ու թաղման մանրամասները՝ իբրեւ քարտուղար գտնվելով հայոց թագավորի մոտ[18]։

Արիստոն Փեղղացին քրիստոնյա հրեա էր, գրել է նաեւ «Յասոնի բանավեճը Պապիսկի հետ» ջատագովական գործը[19], որից պատառիկներ են պահպանվել, սակայն առաջին դարերում այն հայտնի է եղել եկեղեցական հայրերին։ Բացարձակապես անհայտ են Արիստոնի կյանքի հանգամանքները՝ բացի Մովսես Խորենացու այս տեղեկությունից, թե քարտուղար է եղել Արտաշեսի մոտ եւ նկարագրել նրա մահն ու հուղարկավորությունը։

Այն, որ Արիստոն Փեղղացին Արտաշեսի մոտ է եղել 128 թվականին (Արտաշեսի մահվան տարին է), այսինքն՝ Բարքոբայի ապստամբությունից մի քանի տարի առաջ, չի հակասում դեպքերի ընթացքին։ 66–70 թթ. հրեական առաջին ապստամբությունից եւ Երուսաղեմի տաճարի ավերումից հետո հրեական հուզումները երբեք չեն դադարել։ Տրայանոսի վերջին տարիներին (115–117 թթ.) հրեական սփյուռքում բռնկված ապստամբությունը ճնշվեց, բայց հաջորդ՝ Ադրիանոս կայսեր շրջանում Պաղեստինում նախապատրաստվում էր նոր ընդվզում։ Մինչ 132 թ., երբ սկսվել է ապստամբությունը, հրեաները զենք էին հայթայթել, քարայրներում անցումներ փորել, ջոկատներ կազմել։ Ապստամբությանը չեն միացել քրիստոնյա հրեաները։ Նրանք դեմ են եղել ոչ միայն Բարքոբայի գլխավորած շարժմանը, այլեւ ապստամբության գաղափարին

---

[17] Մարանդը գավառ էր Վասպուրական նահանգում՝ Ուրմիա լճից հյուսիս-արեւելք, նաեւ՝ այնտեղ համանուն քաղաք եւ դաշտավայր։

[18] Տե՛ս Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց, գք. Բ., գլ. Կ., 1913, էջ 189–190, աշխ.՝ 1990, էջ 123։ Արիստոն Փեղղացուն եւ հրեական ապստամբության վերաբերյալ նրա գործն ավելի սեղմ ներկայացնում է նաեւ Եւսեբիոս Կեսարացին (տե՛ս* Եւսեբիոս Կեսարացի, *Պատմութիւն Եկեղեցւոյ, գպր. Դ., 6, Վենետիկ, 1877, էջ 245. հմմտ.* Евсевий Кесарийский, Церковная история, IV, 6, 1–4, СПб, 2013, *էջ 169–170)։*

[19] Այս երկում քրիստոնեություն ընդունած հրեա Յասոնն ալեքսանդրացի հրեա Պապիսկին բացատրում է, որ Հին Ուխտն ու մարգարեները, երբ խոսում են Մեսիայի մասին, խոսում են Հիսուս Քրիստոսի մասին։

ընդհանրապես եւ հրեական միջավայրից օտարվել են ու ճնշումների ենթարկվել[20]։ Հետեւաբար՝ եթե քրիստոնյա Արիստոն Փեղղացին գրել է Բարքոբայի ապստամբության մասին, պարտադիր չէ հասկանալ, որ նա հայրենիքից հեռացել եւ Հայաստան է եկել հատկապես 132–135 թթ. եւ ոչ ավելի վաղ, երբ նախապատրաստվում էր ապստամբությունը։ Հրեական առաջին ապստամբությունից առաջ հատկապես Փելլա քաղաք էին գաղթել Երուսաղեմի քրիստոնյաները[21], եւ պատահական չէ, որ Փեղղացի եւ քրիստոնյա հրեա Արիստոնը բացասական վերաբերմունքով է հիշել Բարքոբային ու նրա գլխավորած ապստամբությունը, ինչպես եւ երեւում է Արիստոնի գործից օգտված Մովսես Խորենացու երկում։ Պատմիչն ասում է, որ ապստամբությունը տարածվել է նաեւ Ասորիքում, Միջագետքում, Պարսքում։ Այս տարածքներում սփռված էին հրեական համայնքներ, որոնք, փաստորեն, արձագանքել են ապստամբությանը։ Մովսես Խորենացու հաղորդածն այս կերպ պետք է հասկանալ, իսկ մտքի շարունակությունը, որ հրաժարվեցին հարկ տալ հռոմեացիներին, պետք է ուղղել՝ եւ հռոմեացիներին, եւ պարթեւներին։ Նման լայն արձագանքը հարազատ է ոգուն մի ապստամբության, որի առաջնորդը հանդես էր գալիս հրեաների փրկչի անունով։

Մովսես Խորենացին, այսպիսով, հստակ չի հաղորդում, թե Արիստոն Փեղղացին երբ է եկել Հայաստան։ Վերջինիս միջոցով համառոտ պատմելով Բարքոբայի ապստամբության մասին՝ պատմիչն անցնում է նոր մտքի՝ ասելով, որ այդ ժամանակներում Ադրիանոս կայսրը զորք ուղարկեց Ասորեստանի կողմերը եւ հայոց թագավոր Արտաշեսին հանձնարարեց արշավել դեպի Պարսկաստան[22]։ «Այս ժամանակներում» ասվածը պետք է ընկալել ավելի ընդարձակ, քան ապստամբության՝ այսօր ընդունված 132–135 թվականները, համենայն դեպս 5 տարի ավելի վաղ հասկանալն անհնար չէ, երբ նկատի ենք ունենում վերոնշյալ հրեական իրողությունները։

---

[20] *Տե՛ս* «Еврейская электронная библиотека», Земля Израиля (Эрец Израэль), Исторический очерк, Период римско-византического владичества, I, II *ենթակետեր* (https://www.eleven.co.il/land-of-israel/history-until-1948/15784/). «Энциклопедический словарь Ефрона и Брокгауза», т. III, СПб, 1801, *էջ 136–137*. «Православная энциклопедия», հրդված Бар-Кохба, т. IV, 2002, *էջ 338–339։*

[21] *Տե՛ս* ԵՒՍԵԲԻՈՍ ԿԵՍԱՐԱՑԻ, *Պատմութիւն եկեղեցւոյ, դպր. Գ., 5, էջ 153, հմմտ.* Евсевий Кесарийский, Церковная история, III, 5, 3, *էջ 118։*

[22] *Մովսես Խորենացու հաղորդածն ավելին է, քան Եւսեբիոս Կեսարացու պատմածը, իսկ Բարքոբայի ապստամբության վերաբերյալ ընդհանրությունները բխում են այն իրողությունից, որ երկուսի աղբյուրն էլ Արիստոնն է, ինչպես եւ իրենք հաղորդում են։*

Ուշագրաւ է, որ 128–132 թթ. Ադրիանոս կայսրը գտնվել է Ասորիքում, Պաղեստինում եւ Եգիպտոսում։ Համաձայն Դիոն Կասսիոսի՝ կայսրության տարբեր սահմաններում նրա շրջագայությունների նպատակն էր ռազմական պատրաստականության ամրապնդումը[23]*։ Պատմիչը «Հռոմեական պատմության»* LXIX *գրքի 11,1 հատվածում հաղորդում է, որ կայսրը, գտնվելով Հուդայում, գնացել է Եգիպտոս, նույն* LXIX *գրքի 12,2-ում ասում է, որ Եգիպտոսից նորից եկավ Սիրիա։ «Նորից» բառը ցույց է տալիս, որ նա նախապես մտել է Սիրիա՝ Ասորիք, անցել Հուդա, որտեղից՝ Եգիպտոս, եւ կրկին՝ Ասորիք։ Նույն գրքի նախորդ՝ 9, 1–6 հատվածում, խոսելով պաշտպանունակության ամրապնդմանն ուղղված կայսեր ձեռնարկների մասին, պատմիչը նշում է, որ բոլորի համար վերջինս օրինակ էր՝ քայլելով նրանց հետ «եւ գերմանական ձյան, եւ եգիպտական արեւի տակ»։ Հետեւաբար՝ Եգիպտոսում, պետք է ընդունել նաեւ՝ Ասորիքում եւ Հուդայում, նրա ներկայությունը նախ եւ առաջ ռազմական հետաքրքրություն է ունեցել, իրավիճակի ստուգման, մարտունակության բարձրացման նպատակ։ Այս լույսի ներքո համոզիչ է դառնում Մովսես Խորենացու հաղորդածը պարթեւների դեմ պատերազմի մասին, որին, մեր կարծիքով, խանգարել է հայոց թագավորի մահը արշավանքի հենց սկզբում, երբ դեռ հայկական զորքերը չէին անցել Հայաստանի հարավարեւելյան սահմանը։ Արտաշեսի մահը եւ հայկական զորքերի հետ քաշվելը իրական չեն դարձրել հաջողությունը, եւ այդ պատճառով այլ աղբյուրներում հիշատակություն չի մնացել Ադրիանոսի այս ծրագրի մասին։ Հռոմեացիները, մանավանդ Տրայանոսի արեւելյան արշավանքի անհաջող ավարտից հետո, պիտի խուսափեին հիշել նրա հաջորդի նոր ձեռնարկի մասին, որն սկզբից եւեթ ձախողման է մատնվել։*

Քրիստոնյա Արիստոն Փեղղացուն մերձավորների շարքում ընդունելը խոսում է հայոց Արտաշես թագավորի՝ քրիստոնեության հանդեպ ունեցած հանդուրժողության մասին, ինչը հաստատում է նաեւ Ոսկյանց սրբերի վկայաբանությունը՝ պատմելով, որ երբ Ոսկյանք գնացին արքունիք քարոզելու, Արտաշեսը «անտեղի չհամարեց նրանց խոսքերը, բայց անփույթ գտնվեց»։ Ասելով «լսել եմ այդ մասին բազում ուրիշներից, բայց այժմ ազատ չեմ պատերազմներից»՝ նա Սուրբ Ոսկյանց հրավիրել

[23] *Տե՛ս* Кассий Дион, Римская история, LXIX, 11,1 *եւ* 12,2, LXIX 9, 1–6, СПб, 2011, *էջ 134, 136, 131–132։*

է այլ ժամանակ այցելել[24]։ Քրիստոնյաների եւ քրիստոնեության հանդեպ Արտաշես թագավորի հանդուրժող վերաբերմունքի մասին միմյանցից անկախ աղբյուրների այս համաձայնությունը նույնպես հավաստիություն է հաղորդում տեղեկություններին։

Համաձայն պատմահոր եւ հայկական մատենագրության՝ Արտաշեսը հայոց թագավոր Սանատրուկի որդին է, գահակալել է հայոց գահին ապօրինաբար տիրացած Երվանդ թագավորից հետո, որն սպանել էր Սանատրուկի մյուս որդիներին։ Միակ փրկվածը մանուկ Արտաշեսն էր, որին դայակը (խնամատարը)՝ Սմբատ Բագրատունին, պահում եւ մեծացնում է՝ թաքցնելով նրան Հայաստանի հարավարեւելյան շրջաններում ու Պարթեւական թագավորության սահմաններում, որտեղ իշխում էին հայ Արշակունիներին ազգակից Իրանի Արշակունիները։ Վերջիններիս օգնությամբ եւ Սմբատ Բագրատունու զինակցությամբ Արտաշեսը հաղթում է Երվանդին ու գահ բարձրանում։ Իշխել է 41 տարի, կնության վերցրել ալանների արքայադստերը՝ Սաթենիկին, ունեցել Արտավազդ, Տիրան, Տիգրան, Զարեհ, Վրույր, Մաժան անուններով որդիներ, որոնցից ավագը՝ Արտավազդը, հետո Տիրանն ու Տիգրանը հաջորդաբար գահակալել են։ Ապրել եւ գործել է հռոմեական կայսրեր Դոմետիանոսի (81—96 թթ.), Ներվայի (96—98 թթ.), Տրայանոսի (98—117 թթ.), Ադրիանոսի (117—138 թթ.) ժամանակ։

Մովսես Խորենացու այս տեղեկությունները լրացնում է Թովմա Արծրունին[25]՝ այլ աղբյուրներ ունենալով։ Ներկայացնելով Արծրունյաց իշխանների ու թագավորների գործերը եւ Վասպուրականի անցուդարձերը՝ նա Ք. հ. Ա. եւ Բ. դարերում հայոց նույն գահակալներին ու պատմական դեպքերն է մատնանշում։ Խուրան Արծրունին Աբգար թագավորի[26] զորավարներից էր, որը նրա հետ քրիստոնեություն էր ընդունել եւ այդ պատճառով հետագայում հեռացել Սանատրուկ արքայից։ Խու-

---

[24] Տե՛ս Հ. Մ. ՎՐԴ. ԱԻԳԵՐԵԱՆ, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, հտ. Բ., Վենետիկ, 1811, էջ 124—125։

[25] Տե՛ս ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ, Պատմութիւն տանն Արծրունեաց, դպր. Ա., գլ. Զ., Կ. Պոլիս, 1852, էջ 48—52, աշխ.՝ Երեւան, 1978, էջ 68—77։

[26] Եդեսիայի Աբգար Ե. թագավորը՝ առաջին գահակալը, որ ընդունել է քրիստոնեությունը։ Համաձայն հայ մատենագրության՝ նա Տիգրան Մեծի եղբոր որդին է։ Խուրան անվանաձեւի փոխարեն Մովսես Խորենացու գործում Խոսրան է (տե՛ս ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, Պատմութիւն Հայոց, գք. Բ., գլ. ԻԹ., 1913, էջ 147, աշխ.՝ 1990, էջ 94—95)։ Խուրան-Խոսրան Արծրունուն նաեւ Խոսրով անունով կարող ենք հիշատակված համարել Սուրբ Թադեոս առաքյալի վկայաբանության մեջ՝ Աբգար թագավորի հետ քրիստոնեություն ընդունած (տե՛ս

բանի որդի Վաչեն եւ Խուրանի եղբայր Արշավիրը ապրել ու ծառայել են Պարթեւական թագավորությունում եւ Սանատրուկի որդի Արտաշեսի հետ վերադարձել Հայաստան։ Վաչեի որդի Սահակը, Արտաշեսի խնամատար Սմբատ Բագրատունու խնդրանքով մինչ այդ ծառայության անցնելով Երվանդ թագավորի մոտ, լուրեր էր հաղորդում Սմբատ Բագրատունուն, երբ վերջինս ջանք էր թափում պահպանել հայոց օրինական թագաժառանգ Արտաշեսին։ Երբ Սմբատ իշխանն Արտաշեսի հետ թաքնվում էին Վարագ լեռան վրա, եւ Երվանդը, նրանց փնտրելով, գալիս է Տոսպ գավառ, Սահակն է լուր տալիս վտանգի մասին, եւ նրանք հեռանում են Հեր եւ Զարեւանդ։ Իշխանության գալով՝ Արտաշեսը Սահակ Արծրունուն պարգեւում է Վասպուրականի Աղբակ գավառը։ Այս իրողությամբ Արծրունիները Աղձնիքի Սիմ լեռան սահմաններից փոխադրվել են Վանա լճից արեւելք, հաստատվել ու բարգավաճել Վասպուրական նահանգում։

Արտաշես թագավորին Ք. հ. Ա. դարավերջից Բ. դարասկիզբ ժամանակաշրջանում գիտի վրաց տարեգրությունը՝ «Քարթլիս ցխովրեբա»-ն[27]։ Լիովին անկախ հայ մատենագիրներից՝ վրաց տարեգրությունն առանձին մանրամասներ է պատմում, որոնք հակասության մեջ չլինելով հայոց տեղեկությունների հետ՝ լրացնում են դրանք։ Վրաց տարեգիրը նույնպես հայտնում է, որ Արտաշեսը (հիշված է Արտաբան, Արտավան, Արտաշան ձեւերով) գահակալեց Սմբատի օգնությամբ, հաղթեց եւ սպանեց Երվանդին, հիշատակում է Արտաշեսի Արտավազդ, Զարեհ, Տիգրան որդիներին եւ երեք արշավանք, որ դեպի Հայաստան իրականացրին վրաց արքաներ Ազուկն ու Ազմայերը՝ օգնության կանչելով լեկերի (լեզգիների) եւ օսերի (ալանների) թագավորներին։ Վրաց այս գահակալները, ըստ Մ. Բրոսեի, իշխել են Ք. հ. 87–103 թթ.[28]. նույն ժամանակաշրջանում, ինչ Արտաշեսի համար ներկայացնում են հայոց աղբյուրները։ Ըստ վրաց աղբյուրի՝ առաջին արշավանքի ժամանակ ներխուժելով հայկական Շիրակ, Վանանդ, Բասեն, Նախիջեւան գավառներ՝ վրաց եւ

Ղեբուրնա Եդեսացի, *Թուղթ Աբգարու թագաւորի հայոց եւ քարոզութիւն սրբոյ Թադէի առաքելոյ, Երուսաղէմ, 1868, էջ 15)։*

[27] *Տե՛ս* Ջուանշէր, *Համառօտ պատմութիւն վրաց, գլ. Ե., Վենետիկ, 1884, էջ 31–34.* «Картлис цховреба», Тбилиси, 2008, *էջ 31–32, հմմտ.* Л. Мровели, Жизнь Картлийских царей, Москва, 1979, *էջ 33–35։*

[28] *Տե՛ս* Ջուանշէր, *Համառօտ պատմութիւն վրաց, գլ. Ե., էջ 32.* Լ. Շահինյան, *Հայաստանը եւ առաջին Արշակունիները, էջ 414, աղ. Դ.։*

օսական զորքերն ավարով ու գերիներով փորձել են անցնել Կուր գետը, երբ հայկական զորքով նրանց է հասել Սմբատ Բագրատունին։ Նա պահանջել է վերադարձնել գերիներին եւ մերժում ստանալով՝ անցել գետն ու պարտության մատնել հակառակորդին։ Վրաց տարեգրությունը հաղորդում է, որ Սմբատը Սամցխեում բերդ է կառուցել եւ զորագունդ դրել այդտեղ։ Վրաց եւ օսերի հաջորդ արշավանքն ու ավարառությունը Պարխար լեռների, Տայքի եւ Աշոցքի կողմերում նույնպես ավարտվել են նրանց համար աղետով։ Այս անգամ Արտաշես թագավորն է զորքով հետապնդել նրանց եւ հասել մայրաքաղաք Մցխեթ՝ այնտեղ մնալով հինգ ամիս՝ մինչեւ վրաց թագավորները հաշտություն են խնդրել ու հարկատու դարձել։ Արտաշեսի մասին այստեղ տարեգիրն ավելացնում է. «... եւ գոռայր ընդդէմ յունաց եւ պարսից», վկայություն, որ հայոց թագավորը շարունակ պատերազմների մեջ էր՝ իր երկիրը պաշտպանելով ոչ միայն վրաց եւ ալանների հարձակումներից[29]։ Այդ պատճառով ազատ զգալով իրենց, պատմում է վրաց տարեգիրը, վրաց եւ օսերի զորքերը կրկին մտնում են Հայաստան։ Պատերազմով զբաղված Արտաշես արքան իր Զարեհ որդուն է ուղարկում նրանց դեմ։ Ցիլխ լճի մոտ Զարեհը գերի է ընկնում եւ պահվում Դարալայում (Դարիալի կիրճը պահող բերդում)։ Միայն երեք տարի անց Սմբատ Բագրատունին Արտաշեսի Արտավազդ եւ Տիգրան որդիների հետ զորքով մտնում է Վիրք, եւ վրաց թագավորները հաշտություն են խնդրում՝ վերադարձնելով Զարեհին, խոստանում վճարել հարկը եւ պայմանավորվում պատերազմի դեպքում օգնել միմյանց։

Վրաց տարեգրության հիշատակած այս երեք արշավանքներից Մովսես Խորենացուն հայտնի է միայն վերջինը։ Երկրորդ գրքի ԾԳ. գլխում նա շատ համառոտ պատմում է վրաց Քարձամ թագավորի հարձակման, Զարեհի գերության եւ ի պատասխան հետեւած հայոց հարձակման մասին, որն իրագործեցին Արտավազդն ու Տիրանը՝ գերությունից ազատելով իրենց եղբորը։ Ուշագրավ է, սակայն, որ պատմիչն ասում է, թե

---

[29] *Մովսես Խորենացին պատմում է Արտաշեսի օրոք Դոմետիանոս կայսեր հրամանով Հայաստան ներխուժած հռոմեական զորքի դեմ Այրարատ նահանգի Բասեն գավառում տեղի ունեցած մեծ ճակատամարտի եւ հայոց զորքի ձեռք բերած հաղթանակի մասին (տե՛ս «Պատմութիւն Հայոց», գք. Բ., գլ. ԾԴ., էջ 184–185, աշխ.՝ 1990, էջ 119–120)։ Այս տեղեկության հավաստիության մասին տե՛ս* Լ. ՇԱՀԻՆՅԱՆ, *Հայաստանը եւ առաջին Արշակունիները, էջ 364–367։*

Քարձամը, «ապստամբեցնելով» վրաց երկիրը, գերի վերցրեց Զարեհին[30]։ Ուսումնասիրողները նկատել են, որ Մովսես Խորենացու աղբյուրին (որը Բարդաձանի միջոցով Ողյումպ քուրմն է) հայտնի է եղել նաեւ վրաց տարեգրքի նկարագրած առնվազն նախորդ արշավանքը, որի արդյունքում վրաց թագավորները Մցխեթ հասած Արտաշեսից հաշտություն են խնդրել եւ հարկատու դարձել։ Այս պայմանը խախտելով կամ «ապստամբելով» է Քարձամը նոր արշավանք ձեռնարկել։

Վրաց տարեգրքի հիշած այս արշավանքներից տարբեր է Ծ. գլխում Մովսես Խորենացու նկարագրած արշավանքը, քանի որ այնտեղ գերի է ընկել ալանների արքայազնը, եւ այն առնվազն 20-ամյակ վաղ է տեղի ունեցել՝ Արտաշեսի գահակալության սկզբում, որից հետո են ծնվել Արտաշեսի ու Սաթենիկի հիշյալ որդիները։

Համաժամանակ իշխած վրաց Ազուկ եւ Ազմայեր թագավորների վերաբերյալ Ջվանշերի գործի հայերեն բնագիրը հրատարակող Հ. Աթանաս Թիրաքյանը, հիմնվելով Բրոսեի բացատրության վրա, որ Ազմայեր (այլ դեպքերում՝ Ամզիեր, Արմազել) անունը պետք է հասկանալ Արմազեցի, առաջարկում է վրաց թագավորին Մովսես Խորենացու նշած անունով ճանաչել Քարձամ (Քարթամ) Արմազեցի[31]։ Վրաց պատմագիտությունը Քարթամ թագավոր է ճանաչում Ք. հ. 75—106 թթ.[32]։ Անտեղի չի լինի անդրադառնալ, որ վրաց պատմագիտությունն իրավացիորեն պատճառ չի տեսնում Քարթամ թագավորին եւ հիշյալ դեպքերը տեղափոխելու Քրիստոսից առաջ ժամանակաշրջան, եւ ինչպես նկատել է Լ. Շահինյանը, ստացվել է, որ համաձայն հայ պատմագիտության ընդունած (դասավանդվող) տեսակետի՝ դեպքերը տեղի են ունեցել Ք. ա. Բ. դարում, իսկ ըստ վրաց պատմագիտության՝ մոտ 250 տարի անց՝ Ք. հ. Ա. դարում։

Հայ-վրացական դաշինքը գործել է հետագա տասնամյակներում. հայոց օգնությամբ գահ է բարձրացել վրաց թագավոր Ադմին, նաեւ հայոց օգնությամբ նրա որդին՝ Համազասպը, պատասխան արշավանք է ձեռնարկել օսերի երկիր, որոնք ավարի էին ենթարկել Վրաստանը։ Ժամանակ անց Համազասպին, երբ նա հեռացել է իրենց ավանդներից, երես թեքել նաեւ հայոց հետ դաշինքից, վրաց իշխանները մերժել են եւ իրենց

---

[30] *Տե՛ս* Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց, գք. Բ., գլ. ԾԳ., 1913, էջ 184, աշխ.՝ 1990, էջ 119։*

[31] *Տե՛ս* Ջուանշէր, *Համառօտ պատմութիւն վրաց, գլ. Ե., էջ 34, ծանոթ. 2։*

[32] *Տե՛ս* Լ. Շահինեան, *Հայաստանը եւ առաջին Արշակունիները, էջ 414, աղ. Դ.։*

համար թագավոր խնդրել հայոց թագավորի որդի Վրոյնին (կամ՝ Վիրո)։ Այս հայազգի թագավորին սիրելով ու մեծարելով՝ Վրաստանում կոչել են Ռեւ, որ նշանակում է հաղթող, ինչպես բացատրում է վրաց տարեգիրը[33]*։ Ուշագրավ է, որ վրաց աղբյուրը հիշատակում է հայոց արքունիքում կիրառվող մի անուն, որը հիշված է Ոսկյանց եւ Սուքիասյանց վկայաբանություններում։ Վիրո-Ռեւը Վրաստանում իշխել է Ք. հ. 186–213 թթ. կամ 189–216 թթ.։ Նրա մասին վրաց պատմագիր Դավիդ Բագրատիոնին (ԺԸ. դ.) նշում է, որ հայոց Տիգրան թագավորի կրտսեր որդին էր*[34]*, ինչպես, հավանաբար, նա գրանցված է տեսել «Քարթլիս ցխովրեբա»-ի իր օրինակում, որի հայերեն թարգմանության մեջ (Ջուանշէր, «Համառօտ պատմութիւն վրաց») հայոց թագավորի անունը չկա։ Վրաց տարեգությունը, այսպիսով, 180-ականներին իշխող հայոց թագավորին նույնպես հիշատակում է Տիգրան անունով (եւ ոչ Սոհեմոս, ինչպես նրան կոչել էին օտարության մեջ)։ Ուշագրավ է նաեւ Տիգրանի որդի եւ Վրաստանի թագավոր Վիրոյին տրված Ռեւ պատվանունը եւ անվան բացատրությունը՝ հաղթող։ Հր. Աճառյանի թեական կարծիքով՝ Ռեւ-ը (Ռեւ) հայերեն «արեւ» բառն է՝ առանց «ա»-ի*[35]*։ Արեւը միշտ ցրում է խավարը, միշտ հաղթող է։ Արեւի, լույսի նույն հասկացությունից է Պերոզ անունը, որը, իբրեւ անձնանուն բացատրելով հաղթող իմաստով, ինչպես ավանդված է պատմագիրների կողմից*[36]*, Հր. Աճառյանն իբրեւ բառ բացատրում է շղարշ, վարշամակ, գոտի նշանակությամբ*[37]*, այսինքն՝ մի բան, որը պարուրում, պատում է։ Այս ընկալումը պիտի արծարծված լինի արեւին պարուրող լույսի, փառ(ք)ի նմանությունից, ինչպես հուշում է «փարազուն» բառը, որը «բերոզ», «բիյրուզ», «ֆիյրուզ» տարբերակների հետ Հր. Աճառյանը բացատրում է՝ հզոր, քաջ, հաղթող, նաեւ՝ փառավոր, ճոխ՝ ըստ ՆԲՀԼ-ի*[38]*։ Պերոզ անունը նույն «փարազուն» բառն է՝* farr *(պահլ.՝ փառք),* farra *(պարս.՝ լույս) հիմքով, որը նույն կերպ է հնչում նաեւ հայերենում՝*

---

[33] *Տե՛ս* Ջուանշէր, *Համառօտ պատմութիւն վրաց, գլ. Ե., էջ 32, 37–38.* «Картлис цховреба», *էջ 36–37. հմմտ.* Л. Мровели, Жизнь Картлийских царей, *էջ 35–36։ Ըստ Բրոսեի՝ Ադմին գահակալել է 129–132 թթ., ըստ արդի պատմագիտության՝ Գադամ՝ 132–135 թթ., Համազասպը, ըստ Բրոսեի, 132–146 թթ., ըստ արդի պատմագիտության՝ 185–189 թթ., Վիրո-Ռեւը, ըստ Բրոսեի, 186–213 թթ., ըստ արդի պատմագիտության՝ 189–216 թթ.։*

[34] *Տե՛ս* Давид Багратиони, История Грузии, §57, Тбилиси, *1971։*

[35] *Տե՛ս* Հր. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ., էջ 317։*

[36] *Տե՛ս անդ, էջ 262։*

[37] *Տե՛ս* Հր. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան, հտ. Դ., Երեւան, 1979, էջ 76։*

[38] *Տե՛ս անդ, էջ 485. ՆԲՀԼ, հտ. Բ., Վենետիկ, 1837, էջ 936։*

«փառ»։ Այն նախ ընկալվում է իբրեւ լույս, հետո՝ երկրորդական իմաստներով՝ անիվ, անիվի թեւ (նմանությամբ արեւի եւ նրանից բխող ճառագայթի), փետուր, զգեստ, թաղանթ (նմանությամբ լույսով պարուրման) կամ պարզապես՝ ծածկել, պատել (ինչպես լույսը՝ արեւին)[39]։ Այս անդրադարձը վկայում է, որ գործ ունենք մի երեւույթի հետ, երբ անունների թարգմանության եւ (կամ) մեկից ավելի անուն ու պատվանուն կրելու պատճառով նույն իշխողը տարբեր աղբյուրներում կարող է հիշատակվել տարբեր կերպ։

Այսպիսով, ըստ ժամանակաշրջանի (Ա.–Բ. դդ. սահմանագիծ), ըստ անձանց, ըստ քաղաքական իրավիճակի՝ վրաց տեղեկություններն Արտաշեսի, նրա որդիների, Արտաշեսին նախորդած Երվանդի մասին ներդաշնակ են հայկական աղբյուրներին՝ լինելով անկախ վերջիններից, որովհետեւ պատմում են նաեւ արշավանքների մասին, որոնք հայկական աղբյուրներին կա՛մ հայտնի չեն, կա՛մ հայտնի են մասամբ։

Շարունակությունը՝ հաջորդիվ

[39] *Տե՛ս* Հր. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան, հտ. Դ., էջ 481–482։*